ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ 2000 ՏԱՐԻՈՑ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՃԱՐԻՆ

1- Հոլանտաբնակ Տիկ. Մարիամ Քըրօղլու, Ս. Յակոբեանց տաճարին կը նուիրէ ոսկեայ մատանի մը: (Յունուար)

2- Հոլանտաբնակ Տիկ. Նազելի Կէօչէրեան, նոյնպէս կը նուիրէ ոսկեայ մատանի մը: (Յունուար)

3- Ամերիկաբնակ Տիկին Լիտիա Պոյաճեան, Աստուածածնայ պատկերին կը նուիրէ 18 քարաթ ոսկեայ ապարանջան մը: (Յունուար)

4- Ամերիկաբնակ՝ Տիկին Էլիզա Սալիպեան Ս. Յակոբի կը նուիրէ վեց ուրարներ, ի յիշատակ Սալիպեան, Օշական, Ոսկերիչեան, Հայկազեան և Եումուշաքեան ընտանիքներու ննջեցեալներուն և Հայ Նահատակներու յիշատակին: (Մարտ)

5- Սաղիմաբնակ, Տ. Տ. Շանթ և Սիլվա Գասպարեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրեն թիթեղ մը (սոյա Պին) ձէթ: (Մարտ)

6- Հոնկ Քոնկաբնակ Տիար ձէք Մաքսեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ 200 մեթր կերպաս, չուրջառներու համար: (Մարտ)

7- Սաղիմաբնակ՝ Օրիորդ Աշխէն Հինդլեան, Ս. Յակոբին կը նուիրէ մէկ զոյգ աչտանակ, ի յիշատակ իր ծնողաց: (Մարտ)

8- Սաղիմաբնակ՝ Լիան Գրիգորեան, Ս. Յակոբի կը նուիրէ խորանի՝ 3 և սեղանի՝ 1 ծածկոց, ինչպէս նաև խաչի՝ 2 սպիտակ բոնիչներ: (Ապրիլ)

9- Սրի Լանքացի ուխտաւորուհի մը, ոսկեայ խաչիկ մը կը նուիրէ Ս. Աստուածածնայ պատկերին: (Ապրիլ)

10- Սանտրունի եղբարք, երկու զոյգ յախճապակեայ աչտանակներ և երկու զոյգ ծաղկամաններ կը նուիրեն Ս. Յակոբայ տաճարին: (Ապրիլ)

11- Լոս Անճելոսաբնակ, Տիկ. Պերճուհի Գրիգորեան, դեղին կերպասի վրայ, ոսկեգոյն փուլերով, ձեռագործ սկիհի ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբի: (Մայիս)

12- Սաղիմաբնակ Տ. Տ. Մանուկ և Նազիկ Մանուկեան, ձեռագործ գորգ մը կը նուիրեն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ: (Յունիս)

13- Լոս Անճելոսաբնակ Տիկին Մարիձա և քոյրեր Ս. Յակոբի, Աստուածամօր և Յարութեան տաճարներուն կը նուիրեն երեք կլոր, ասեղնագործ սեղանի ծածկոցներ: (Օգոստոս)

digitised by A.R.A.R.@

15- Սաղիմաբնակ Տիկ. Արուսեակ Զաթալեան, Ս. Աստուածածնայ տաճարի՝ Հեթում Թագաւորի խորանին կը նուիրէ, կարմիր թաւիշի վրայ, ասեղնագործ և մանր, սպիտակ յուլունքներով ծածկոց մը: (Օգոստոս)

16- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգշ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան, Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ կարմիր թաւիշի վրայ սաղաւարտ մը, (առանց խաչի) և վակաս մը: (Օգոստոս)

17- Հալէպաբնակ՝ Տիկ. Արաքսի Վիզոյեան, Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ սև թաւիշի վրայ յուլունքեայ զոյգ մը հողաթափ: (Սեպտեմբեր)

18- Աթէնքէն՝ Տիկ. Գոհարիկ Թադէոսեան Ս. Յակոբի կը նուիրէ երկու չիլ պատարագի գինի, բուրվառի ածուխ և խունկ: (Սեպտեմբեր)

19- Աստուածամօր տաճարին եղած նուէրներ.
ա. Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. Գալէնտէրեանէ՝ Մէկ կանթեղ, Ղպտոց խորանին:
բ. Հոգշ. Տ. Ղևոնդ Աբղ. Յովհաննիսեանէ՝ Երեք կանթեղ, Ասորւոց շարանին Տէր և Տիկ. Աբգար Զաքարեաններ՝ մարգարտազարդ սաղաւարտ մը:

ԵՐԱՆԻ՞ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՑԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

Նուրհան Եպս. Մանուկեան
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

digitised by A.R.A.R.@